## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 դեկտեմբերի 2025թ. թիվ 883-Ա

Վ.ՃՈՒՂՈՒՐՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱԼ.ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 696-Ա որոշման 1-ին կետը և ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 882-Ա որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վարդուհի Աղասիի Ճուղուրյանին 2026 թվականի հունվարի 5-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից և լուծել նրա հետ 2023թ. նոյեմբերի 16-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Վարդուհի Ճուղուրյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի և ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր